պահանջում էր հյուրին պատվավոր կերպով ընդունել, լավ կերակրել թե՛ նրան և թե՛ նրա ձիուն։ Մեկ օր կշեռք էր հարկավորվում, մյուս օրը՝ մաղ կամ մի հարմար ման, պարապ էշ, ձի... հազար ու մի այսպիսի դեպքերում փոքր ընտանիքն ավելի և ավելի հաճախ կարիք էր ունենում հարևանի օժանդակության։ Ամոթ էր մերժել և շտալ խնդրածը։ Անհրաժեշտ էր դրկիցություն-հարևանություն անել, որովհետև վաղն էլ ինքն էր կարիքի մեջ լինելու։ Միայն սնահավատությունն էր թելադրում այդ փոխառությունը սահմանափակել որոշ արգելքներով, օրինակ՝ երկուշաբթի կշեռքը փոխ չէին տալիս, հում կաթը վերցնելիս պիտի ածուխ ձգեին և այլն։ XIX դ. երկրորդ կեսում ընդհանուր գործածության մեջ մտավ թեյը, երբ հյուր ընդունելիս ամեն մեկը պարծենում էր, որ կարող է մեծարել տաք և քաղցր թեյով, և որովհետև հարևանության մեջ ինքնաեռը գտնվում էր մեկ կամ երկու ընտանիքների մոտ, այդ ինքնաեռը շրջում էր մեկ հյուրատանից մյուսը։ Ամեն մեկը շատ լավ գիտեր, թե ինչ ունի հարևանը, նրա իրերից և անասունից որն է ազատ, թեև անթույլատրելի էր համարվում հետևել հարևան տան մեջ կատարվող անցուդարձին։ Ամենավաղ երկար երեկոներին հարևանները իրար մոտ էին հավաքվում թե՛ գործերի մասին խոսելու և թե՛ սոսկ ժամանցի համար՝ մի հեքիաթ կամ վեպ, աշուղի նվագ ու երգ, հեռու տեղից եկած հյուրի պատմածը լսելու։ Հյուր եկած ժամանակ հարևանը առանց քաշվելու մտնում էր ներս և կողքին նստում՝ մի հետք հին ժամանակներից, երբ հյուրը ամբողջ համայնքի հյուրն էր։ Մանուկները մեծանում էին հարևանության մեջ և հասակն առնելով, պահպանում էին իրար հանդեպ մտերմական զգացմունքներ և երբ լինում էր նյութական կարիք կամ հոգեկան ծանր ապրում՝ հիվանդություն, մահ, անհաջողություն... կամ ուրախություն, հարսանիք, մանկան ծնունդ, սիրելի մարդու հեռվից վերադարձ... կամ ստացած բարի լուր... հարևանն էր, որ առաջինը գալիս էր և այս կամ այն ձևով մասնակից դառնում թե՛ դառն, թե՛ քաղցր բոպեներին։ Թուլանում էին արյունակցական կապերի անհրաժեշտ պահպանումը կյանքի ռեալ թելադրանքների ներքո և ուժեղանում էր բարի հարևանության կարևորությունը։ Ստեղծվում էր նոր հասարակական հոգեբանություն, որի մեջ արյունակցական մտերմությունը տեղի էր տալիս հարևանական մտերմության առջև։ Մի տեսակ պահանջ էր դառնում հասակակից հարևանների միատեղ հավաքվելը, և սովորական տեսարան էր՝ թաղի հասակակից ծերունիներ—տղամարդիկ՝ երկար չիբուխները բերաններին և անբաժան փայտը ձեռներին, կամ կանայք՝ անդադրում իլիկները մանելիս, իրար կողքի նստած, զրույց էին անում, կամ նույնիսկ մնում էին անխոս՝ վայելելով միայն իրար մոտիկության զգացմունքը։ Նույնիսկ ստեղծվում էր մի տեսակ թաղային ազգասիրություն, որը հաճախ ամբողջ թաղի հարևաններին միացնում էր մյուս թաղի դեմ որևէ վեճի ժամանակ։ Ճիշտ է՝ բամբասասիրությունը շատ էր տարածված, սակայն ուրիշ թաղեցոց իրենց թաղում ասածի և պատահածի մասին խոսք դուրս տանողներին ծուռ աչքով էին նայում։ Հարևանությունը որոշ պարտականություն էր դնում թաղի պատիվը պահելու։ Հարևանության մեջ հաշտ ապրելը դառնում էր հասարակական բարոյականության առաջնակարգ պահանջ։ Գյուղում գողություն չպիտի լիներ, առավել ևս թաղի հարևանության մեջ։ Հողաբաժանության ժամանակ առաջնություն էր տրվում հարևանին։ Հարևանն աշխատում էր իր հողաբաժինն ունենալ հարևանի հողերի կողքին։ Սակայն խույս էին տալիս անբարիշտ հարևանի հողակցությունից, մեկից, որը գողության տրամադրու-